

Արմինե Հ. Տիգրանյան

**ՇՈՒՇԻԻ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ
ՂԱԶԱՆՉԵՑՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԻՐԱԽԱՎՈՐՄԱՆ
ԴԵՊՔԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Պատերազմի ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության միջազգային սկզբունքների դիտանկյունից*

Քանալի բառեր – մշակութային արժեքները պատերազմի ժամանակ, միջազգային սովորության նորմեր, ռազմական անհրաժեշտություն, տարբերակման սկզբունք, համամասնության սկզբունք, նախազգուշության սկզբունք, ադրբեջանական ագրեսիա, Ղազանչեցոց եկեղեցու թիրախավորում:

Մուտք

2020 թ. սեպտեմբերի 27-ին պատերազմի սանձազերծումից ի վեր ադրբեջանական զինված ուժերը բացահայտ կերպով թիրախավորել են Արցախի հայկական մշակութային ժառանգությունը՝ խախտելով ոչ միայն տարբեր կոնվենցիաներով իրենց ստանձնած միջազգային պարտավորությունները, այլև պատերազմի ժամանակ պարտադիր դարձած մշակութային ժառանգության պահպանության միջազգային **սովորության նորմերը**¹:

Հոդվածում քննության են ենթարկվում պատերազմի ժամանակ մշակութային արժեքների նկատմամբ կիրառվող **ռազմական անհրաժեշտության, տարբերակման, նախազգուշության և հա-**

* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.05.2022:

1 *Stu Culture Under Fire: Armed Non-State Actors And Cultural Heritage In Wartime*, Geneva Call, UNESCO, October 2018, էջ 1-62, https://genevacall.org/wp-content/uploads/2017/10/Cultural_Heritage_Study_Final.pdf (մուտք 21.03.2022):

մամանություն սովորության սկզբունքները՝ Ադրբեջանի կողմից Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու թիրախավորման օրինակով:

Պատերազմական վտանգներից մշակութային ժառանգության միջազգային պաշտպանությունը ենթադրում է ոչ միայն զինված բախումներից հետո օկուպացված տարածքներում կամ խաղաղ ժամանակ մշակութային արժեքների պաշտպանությունը, այլև **բուն պատերազմական գործողությունների ընթացքում** դրանց չթիրախավորումը կամ էլ «թիրախավորման» «թույլատրելի» սկզբունքների կիրառումը: Խնդիրն այն է, որ թեև, պատերազմի ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության Հաագայի՝ 1954 թվականին ընդունված կոնվենցիայի, դրան կից արձանագրությունների և այլ կանոնակարգերի համաձայն, անթույլատրելի են ժառանգության ոչնչացումը, վանդալիզմի դրսևորումն ու թշնամանքը², սակայն մինևս միայն ժամանակ հենց նույն օրենքները որոշ կետերում մի շարք հակափաստարկներ են մատուցում՝ ներառելով պատերազմի ժամանակ ժառանգության վրա հարձակումները «օրինական» դարձնելու «թույլատրելի» նորմեր³: Այդ օրենքները վկայակոչելով՝ սովորաբար «արդարացվում է» ժառանգության վրա հարձակումը ռազմական գործողությունների ընթացքում, ուստի այս առումով բացառություն չէր նաև Ադրբեջանի կողմից Ղազանչեցոցի հրթիռակոծման հայտնի դեպքը:

Դեռ անհիշելի ժամանակներից պատերազմների ընդունված առանձնահատկություններն⁴ են եղել մշակութային ժառանգության

2 Տե՛ս Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict 1954, art. 4, UNESCO, <http://www.unesco.org/new/en/culture/themes/armed-conflict-and-heritage/convention-and-protocols/-1954-hague-convention/> (մուտք՝ 15.12.2020), Second Protocol To The Hague Convention Of 1954 For The Protection Of Cultural Property In The Event Of Armed Conflict The Hague, 26 March 1999, art. 6a, <https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl.nsf/51b22df69e39d9d3c12563cd00587b41/b5563636ca661533c12563cd0051ca5b> (մուտք՝ 12.02.2022), First Protocol to the Hague Convention for the Protection of Cultural Property 1954, UNESCO, http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=15391&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=-201.html (մուտք՝ 15.12.2020):

3 Հաագայի 1954 թ. «Չինված բախումների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետում նշվում է, որ մշակութային արժեքների դեմ ուղղված թշնամական գործողությունների պլզելքը կարող է չեզոքացվել, եթե մշակութային արժեքի ոչնչացումը հակառակորդի կողմից պայմանավորված է ռազմական անհրաժեշտությամբ (տե՛ս Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict 1954, art. 4/2, UNESCO, <http://www.unesco.org/new/en/culture/themes/armed-conflict-and-heritage/convention-and-protocols/1954-hague-convention/> (մուտք՝ 15.12.2020)):

4 Տե՛ս **Rothfield L.**, Antiquities under Siege: Cultural Heritage Protection After the Iraq War, Lanham: Altamira Press, 2008:

համատարած ոչնչացումը և «թալանի իրավունքը»⁵: Ավանդաբար պատերազմի հետևանք և պարտվողներին պատժելու միջոց հռչակված «պատերազմի ավարի» ձեռքբերումն ուղեկցվում էր հաղթողի կողմից մշակութային ժառանգության խորհրդանիշների կողոպուտով⁶: Բայց, չնայած այս ընդունված նորմերին, մշակութային ժառանգությունը պաշտպանելու պարտավորությունը տարբեր քաղաքակրթությունների ուշադրության կենտրոնում է եղել մշտապես⁷: Ժամանակի ընթացքում մշակութային ժառանգության համատարած ոչնչացման բազմաթիվ դեպքերը միջազգային հանրությանը ստիպեցին մշակել հատուկ կանոնակարգեր, որոնցով կմեղմվեին պատերազմների ժամանակ դրա վրա հարձակումների վնասներն ու զանգվածային ոչնչացումները:

Այս համատեքստում, որպեսզի առավել բացահայտ լինի 44-օրյա պատերազմի ընթացքում մշակութային ժառանգության ոչնչացման դեպքերը **սովորության սկզբունքների դիտանկյունից քննելու փորձը**, հարկ ենք համարում հավելել հետևյալը. զինված բախումների ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային գործող կոնվենցիաների ու պայմանագրերի անդամ են թե՛ Հայաստանը և թե՛ Ադրբեջանը, իսկ Արցախի Հանրապետությունը՝ ոչ⁸: Բայց քանի որ համանման դեպքերում գործում են պատերազմի ժամանակ մշակութային ժառանգության

5 Այդ մասին տե՛ս Teijgeler R., Preserving cultural heritage in times of conflict. In book: Preservation management for libraries, archives and museums, London, 2006, էջ 133-165, https://www.researchgate.net/publication/270216945_Preserving_cultural_heritage_in_times_of_conflict (մուտք 15.12.2021):

6 Տե՛ս Harvey E. Oyer III, The 1954 Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict – Is It Working? A Case Study: The Persian Gulf War Experience, 23 COLUM.-VLA J.L. & ARTS 49, 1999:

7 Տե՛ս Captain Joshua E. Kastenber, USAF “The Legal Regime for Protecting Cultural Property during Armed Conflict”, 1997, 42 Air Force Law Review 277, 281:

8 Ըստ «**Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին**» Ժնևի 4-րդ կոնվենցիայի (12.08.1949) 2-րդ հոդվածի՝ «սույն Կոնվենցիան կկիրառվի պատերազմ հայտարարելու և ցանկացած զինված կոնֆլիկտի դեպքում, որը ծագում է Երկու կամ մի քանի Բարձր Պայմանավորվող Կողմերի միջև, անգամ այն դեպքում, եթե դրանցից մեկը չի ընդունում պատերազմական դրությունը: ... Եթե կոնֆլիկտի մեջ գտնվող տերություններից մեկը չի հանդիսանում սույն Կոնվենցիայի մասնակից, այդ կոնֆլիկտին մասնակից տերությունները իրենց փոխհարաբերություններում, այնուամենայնիվ, կապված կմնան սույն Կոնվենցիայով» («Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» Ժնևի 1949 թվականի կոնվենցիա, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=50336> (մուտք 12.03.2022)): Այս համատեքստում սովորության նորմերն էլ Ժնևի և Հաագայի կոնվենցիաների հիմքով են գործում, ուստիև կոնվենցիոնալ դրույթները տարածվում են նաև սովորության սկզբունքների վրա: Այսինքն՝ եթե նույնիսկ Արցախը կոնվենցիայի կողմ չէ, այնուամենայնիվ, Ադրբեջանը պարտավոր է պահել դրա նորմերը:

պահպանության սովորության նորմերը⁹, ուստի Արցախում մշակության արժեքները բոլոր իրավիճակներում իրավականորեն պաշտպանված կարող էին լինել: Աներկբա է, որ եթե նույնիսկ պետությունը չի անդամակցում զինված հակամարտության դեպքում մշակության արժեքների պաշտպանությունը կարգավորող որևէ պայմանագրի, այն շարունակում է մնալ պարտավորված միջազգային իրավունքի «չգրված» կանոններով՝ զինված հակամարտության սովորության միջազգային օրենքով սահմանված պարտավորություններով: Այդ կանոնները, ըստ էության, մշակվել են ժամանակի ընթացքում որպես ընդհանուր պրակտիկա և ամրագրվել միջազգային մարդասիրական սովորության օրենքներում, **որոնց կիրառելիությունը չի կարող վիճարկվել ոչ մի պետության կողմից**¹⁰: Միջազգային սովորության օրենքների համալիր դիտարկմամբ պարզ դարձավ, որ դրանք մեծ մասամբ արտացոլում են 1954 թ. Հաագայի կոնվենցիայում և դրա երկու արձանագրություններում սահմանված կանոնները¹¹, ինչպես նաև Ժնևի 1949 թ. կոնվենցիան՝ համապատասխանաբար իր երկու արձանագրություններով: Սա նշանակում է, որ նշված կոնվենցիաների ամենակարևոր դրույթները՝ որպես իրավական գերակա հիմքով համընդհանուր ճշմարտություն, ներառված են սովորության օրենքներում և ընդհանրացված կերպով ներկայացվում են միջազգային իրավունքի բոլոր սուբյեկտներին:

Հարկավ, կարող ենք փաստել, որ 44-օրյա պատերազմի ընթացքում մշակության ժառանգության կանխամտածված ոչնչացման ամենասակնհայտ դեպքերից մեկը կամ թերևս ամենածավալայինը Ադրբեյջանի զինված ուժերի կողմից 2020 թ. հոկտեմբերի 8-ին ուղիղ նշանառությամբ Ղազանչեցոցի երկուանգամյա¹² հրթիռակո-

9 Մարդասիրական իրավունքը միջազգային իրավունքի մաս է կազմում, որի առաջնային նպատակն է պաշտպանել անհատների կյանքը և հետևաբար նաև մարդու ստեղծագործ մտքի արտահայտությունը՝ մշակության ժառանգությունը (տե՛ս **Toman J.**, The Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, Aldershot/Paris, 1996, Dartmouth/UNESCO):

10 Տե՛ս **Roethlisberger E.**, The importance of respect for international humanitarian law and the activities of the ICRC Member of the Committee, Protection of Cultural Property in the Event of Armed Conflict Report on the Meeting of Experts (Geneva, 5-6 October 2000, ICRC), էջ 15-19:

11 Տե՛ս **Roger O'Keefe, Camille Péron, Tofiq Musayev, Gianluca Ferrari**, Protection of Cultural Property. Military Manual, UNESCO, 2016, <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000246633> (մուտք 12.03.2022):

12 **Երկրորդ** հրթիռակոծման ժամանակ եկեղեցուն լրագրողներն իրենց մասնագիտական աշխատանքն էին կատարում լուսաբանելով առաջին հարվածի հետևանքները: Կրկնակի հարձակումը բացահայտեց ոչ միայն դիտավորության առկայությունը, այլև քրիստոնեական արժեքի նկատմամբ անհանդուրժողականությունը:

ծումն էր, ինչի հետևանքով վնասվեցին 19-րդ դարի եկեղեցու գմբեթը և արտաքին ու ներքին մի շարք հաստիքներ: Սովորույթային օրենքների քննությամբ կփորձենք հնարավորություն ստեղծել բացահայտելու Ղազանչեցոցի վրա Ադրբեջանի հարձակման հանցավորության աստիճանը: **Ղազանչեցոցի դեպքն ընտրել ենք որպես օրինակ, բայց բոլոր փաստարկները, որոնք կներկայացվեն ստորև, այս կամ այն լրացմամբ կարող են ընդունելի լինել նաև մշակութային այլ արժեքների վրա հարձակումների դեպքում:**

Պատերազմի ժամանակ գործող և խնդրո առարկա միջազգային մարդասիրական օրենքների սովորույթային դարձած սկզբունքները 4-ն են՝ **ռազմական անհրաժեշտության, տարբերակման, նախազգուշության և համամասնության:** Ըստ էության, դրանք վերաբերում են զինված հակամարտության բոլոր կողմերին՝ և՛ պետություններին (միջազգային բախումների կողմեր), և՛ ոչ միջազգային բախումների մասնակից կողմերին (էթնիկ խմբեր): Պետք է շեշտել, որ միջազգային մարդասիրական իրավունքի փաստաթղթերը պարտադրում են մշակութային արժեքները պաշտպանել հակամարտության երկու կողմերին էլ, այսինքն՝ ինչպես մշակութային արժեքը վերահսկող, այնպես էլ հակառակ կողմին¹³: Հավելենք՝ հիշյալ սկզբունքներից որևէ մեկի խախտումն արդեն միջազգային լուրջ հանցագործություն է: Ուստի մտորելով հարձակման հանցավորությունը ներկայացնելու շուրջ՝ հարկ ենք համարում քննել միջազգային մարդասիրական օրենքի՝ մշակութային արժեքներին վերաբերող սովորույթային կանոնները, ապա՝ ներկայացնել Հաագայի 1954 թ. կոնվենցիայի և համապատասխան արձանագրությունների, ինչպես նաև Ժնևի կոնվենցիայի և արձանագրությունների մի քանի կետեր, որոնք այն գերակա հիմքն են, որից բխում են սովորույթային նորմերը: Այս կապակցությամբ հարկ է հիշեցնել, որ Հաագայի 1954 թ. կոնվենցիան, որը նաև մյուս միջազգային պայմանագրերի հիմքն է, իր առաջին հոդվածով սահմանում է, որ մշակութային արժեքը, «Անկախ իր ծագումից կամ սեփականատիրոջից, յուրաքանչյուր ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցող շարժական կամ ան-

13 Տե՛ս Practical advice for the protection of cultural property in the event of armed conflict, Advisory Service On International Humanitarian Law, ICRC, 2002, <https://www.icrc.org/en/document/practical-advice-protection-cultural-property-event-armed-conflict-guidelines> (մուտք՝ 03.02.2022):

շարժ ժառանգությունն է»¹⁴: Ի հավելումն դրա՝ նշենք նաև, որ Ղազանչեցոցի թիրախավորումը, բացի սովորությանին օրենքներից, նաև անհանդուրժողականության ու ռասայական ատելության հիմքով ձանաչվելով որպես անօրինական թիրախավորում, արդեն դատապարտվել է ՄԱԿ-ի Հաագայի արդարադատության միջազգային դատարանի 2021 թ. դեկտեմբերի 7-ի որոշմամբ¹⁵: Հարձակումը կանխամտածված, անօրինական, էթնիկ զտման հիմքով Ադրբեյջանի կողմից իրականացվող պետական շարունակական քաղաքականության մաս են որակել նաև 2021 թ. սեպտեմբերի 27-ի «Լեռնային Ղարաբաղի հակամարտության հումանիտար հետևանքների վերաբերյալ» ԵԽԽՎ 2391-րդ¹⁶ և 2022 թ. մարտի 10-ի «Լեռնային Ղարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման մասին» 2582-րդ բանաձևերը¹⁷:

1. Պատերազմի ժամանակ մշակութային ժառանգության թիրախավորման ռազմական անհրաժեշտության սկզբունքը

Ցավալի է, որ **մշակութային արժեքների պաշտպանությունը միջազգային համակարգում բացարձակ չէ** և որոշ կետերում խնդրահարույց է: Միջազգային մարդասիրական օրենքի 38-րդ կանոնը պնդում է. «Հակամարտության յուրաքանչյուր կողմ պետք է հարգի մշակութային արժեքը և ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ խուսափելու կրոնին, արվեստին, գիտությանը, կրթությանը կամ բարեգործական նպատակներին նվիրված կառույցների և պատմական հուշարձանների վրա հարձակումներից, **եթե դրանք**

14 Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict with Regulations for the Execution of the Convention, Chapter I. General provisions regarding protection Article 1 – Definition of cultural property, http://www.unesco.org/new/fileadmin/MULTIMEDIA/HQ/CLT/pdf/1954_Convention_EN_2020.pdf (մուտք՝ 21.06.2021).

15 ՏԵՄ International Court Of Justice, Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan), The Court indicates provisional measures to protect certain rights claimed by Armenia and orders both Parties to refrain from any action which might aggravate or extend the dispute, No. 2021/34, 7 December 2021, <https://www.icj-cij.org/public/files/case-related/180/180-20211207-PRE-01-00-EN.pdf> (մուտք՝ 03.02.2022):

16 ՏԵՄ Council of Europe, Parliamentary Assembly, Humanitarian consequences of the conflict between Armenia and Azerbaijan / Nagorno-Karabakh conflict, Resolution 2391 (2021), resolution 2391.pdf (coe.int) (մուտք՝ 03.02.2022):

17 ՏԵՄ European Parliament resolution on the destruction of cultural heritage in Nagorno Karabakh (2022/2582(RSP)), https://www.europarl.europa.eu/doceo/document/RC-9-2022-0146_EN.pdf (մուտք՝ 03.02.2022):

ռազմական թիրախներ չեն»¹⁸: Կանոնը հավելում է, որ «Յուրաքանչյուր ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցող ժառանգությունը չպետք է հարձակման առարկա դառնա, եթե դա **հրամայականորեն չի պահանջում ռազմական անհրաժեշտությունը**»¹⁹:

Նույն տրամաբանությամբ հիշյալ օրենքի 39-րդ կանոնը հավելում է, որ արգելվում է ցանկացած ժողովրդի մշակութային ժառանգության **օգտագործումը** այնպիսի նպատակներով, որոնք, հնարավոր է, որ հանգեցնեն դրա ոչնչացման կամ վնասի, բացառությամբ այն դեպքերի, **երբ դա բխում է ռազմական անհրաժեշտությունից**²⁰: Վերջապես, 40-րդ կանոնն ամբողջացնում է ասվածը՝ նշելով, որ հակամարտության յուրաքանչյուր կողմ պետք է պաշտպանի մշակութային ժառանգությունը. «Յուրաքանչյուր ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցող մշակութային ժառանգության գողության, կողոպուտի կամ յուրացման և վանդալիզմի ցանկացած գործողություն արգելվում է»²¹:

Ինչպես տեսանք, սովորության օրենքներին վերաբերող բոլոր կետերում կա «**ռազմական անհրաժեշտություն**» տերմինը, որը փաստորեն թուլացնում է պատերազմի ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանության ընդհանուր իրավական համակարգը: Ի լրումն ասվածի՝ նշենք նաև, որ ռազմական անհրաժեշտության սկզբունքը միջազգային սովորության օրենքների տիրույթում է հայտնվել՝ հիմքում ունենալով Հաագայի 1954 թ. և Ժնևի 1949 թ. կոնվենցիոնալ դրույթները²²: Դրանցից ամենակարևորներից մեկն ամրագրված է Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածում, որն արգելում է վանդալիզմի, գողության, կողոպուտի կամ յուրացման ցանկացած գործողություն և բացարձակ արգելք դնում մշակութային արժեքների

18 Customary IHL, Practice Relating to Rule 38. Attacks against Cultural Property, https://ihl-databases-icrc.org/customary-ihl/eng/docs/v2_cou_be_rule38 (մուտք՝ 03.02.2022).

19 Henckaerts J.-M. and Doswald-Beck L., With contributions by Carolin Alvermann, Knut Dormann and Baptiste Rolle, Customary International Humanitarian Law, Volume I: Rules, International committee of the red cross, Cambridge University Press, 2005, p. 127, <https://www.icrc.org/en/doc/assets/files/other/customary-international-humanitarian-law-i-icrc-eng.pdf> (մուտք՝ 09.02.2022).

20 Տե՛ս Customary IHL, Practice Relating to Rule 39. Use of Cultural Property for Military Purposes, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v2_rul_rule39 (մուտք՝ 03.02.2022):

21 Customary IHL Rule 40. Respect for Cultural Property, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v1_rul_rule40 (մուտք՝ 03.02.2022).

22 Տե՛ս Henckaerts J.-M., New rules for the protection of cultural property in armed conflict: the significance of the Second Protocol to the 1954 Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of armed Conflict, ICRC, <https://www.icrc.org/en/doc/resources/documents/article/other/57jq37.htm> (մուտք՝ 10.05.2022):

դեմ ուղղված գործողությունների վրա: Բայց այստեղ էլ արվում է այն բացատրությունը, որը բոլոր խնդիրների հիմքում է. «Պետությունները պարտավոր են հարգել թե՛ իրենց սեփական և թե՛ այլ կողմի տարածքում գտնվող մշակութային արժեքները՝ զերծ մնալով թշնամանքի գործողություններից, **բացառությամբ այն դեպքերի, երբ ռազմական անհրաժեշտությունը հրամայականորեն պահանջում է նման որոշում**»²³: Այսինքն՝ ըստ կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ մասի՝ **մշակութային արժեքների պաշտպանության պարտավորությունից բացառություն է այն դեպքը, երբ «ռազմական անհրաժեշտությունը հրամայականորեն պահանջում է նման որոշում**»²⁴: Փաստական համատեքստի վերլուծությունն ակներև է դարձնում մի ձշմարտություն, որ **մշակութային ժառանգությունը և մշակութային հաստատությունները, քանի դեռ ռազմական նպատակի չեն առնչվում, պետք է պաշտպանված լինեն զինված բախումների ժամանակ**: Այս փաստաթղթի ամենալուրջ թերությունը «ռազմական անհրաժեշտություն» տերմինի մեկնության բացակայությունն է, որը, ինչպես տեսանք, արտացոլված էր նաև սովորութային նորմերում:

Այս գիտակցմամբ փորձենք տալ տերմինի հիմնավոր բացատրությունը: Ռազմական անհրաժեշտությունը սովորութային նորմ է, որի նպատակն է սահմանափակել ռազմատենչ պատերազմներ վարելու իրավունքը: Այն միջազգային մարդասիրական իրավունքի առանցքային հասկացությունն է, քանզի հրաժարվում է այն նորմերից, որոնք սահմանափակում են պետությունների ազատությունը զինված բախումների ընթացքում, և դնում է ռազմական նպատակին հասնելու օրինականության հարցը: **Ուստի շատ հաճախ սույն եզրույթը մեկնաբանվում է որպես աններելի վարքի արդարացում**²⁵: Այն սկզբունք է, որն ամրագրվել է դեռևս Սանկտ

23 Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict 1954, art. 4, UNESCO, <http://www.unesco.org/new/en/culture/themes/armed-conflict-and-heritage/convention-and-protocols/1954-hague-convention/> (մուտք 15.12.2021).

24 Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict 1954, art. 4/2, UNESCO, <http://www.unesco.org/new/en/culture/themes/armed-conflict-and-heritage/convention-and-protocols/1954-hague-convention/> (մուտք 15.12.2021).

25 Տե՛ս **Craig J. S. Forrest**, The Doctrine of Military Necessity and the Protection of Cultural Property During Armed Conflicts, 37 CAL. W. INT'L L. J., 2007, էջ 177-219:

Պետերբուրգի 1868 թ. հռչակագրում և Լիբերի օրենսգրքում²⁶, համաձայն որի՝ մշակութային ժառանգության դեմ օրինական է միայն այնպիսի ռազմական ուժը, որն անհրաժեշտ է, որպեսզի պատերազմող կողմերը հասնեն իրենց նպատակին:

Հարկ է նշել, որ հրամայական ռազմական անհրաժեշտության սահմանափակումը միջազգային օրենսգրքում առաջին անգամ ներկայացվեց Հասագայի «Ցամաքում պատերազմի օրենքների և սովորույթների հարգման մասին» 1907 թ. կանոնակարգում, համաձայն որի՝ թշնամու ժառանգության ոչնչացումը կամ զավթումը օրինական է, եթե հրամայականորեն բխում է պատերազմի ռազմական գործողությունների անհրաժեշտությունից²⁷: Կոնվենցիայի 23-րդ հոդվածի «գ» կետը ռազմական անհրաժեշտությունը սահմանում է որպես այն ամենը, ինչն անհրաժեշտ է պատերազմի կամ պաշտպանության համար կա՛մ մարտի ընթացքում, կա՛մ մարտին նախապատրաստվելիս: Բայց պետք է ընդունել, որ տերմինի ձևակերպումն այստեղ խիստ անորոշ է և նույնիսկ ռազմական իրավաբանների համար է մեծ դժվարություն ստեղծում՝ իրենց գորքերին սովորեցնելու, թե ինչպես մեկնաբանել և աշխատել ըստ այդ հայեցակարգի²⁸: Այստեղ ուշադրության է արժանի մշակութային արժեքի գործառույթի հարցը, որը վերաբերում է տվյալ պահին դրա օգտագործմանը: Այդ առնչությամբ վերոհիշյալ 1907 թ. կանոնակարգի 27-րդ հոդվածն արդեն ամրագրում է, որ «արգելվում է թիրախավորել մշակութային արժեքները, եթե դրանք չեն օգտագործվել ռազմական նպատակներով»²⁹: Ասվածի տրամաբանական հաստատումն է այն, որ հենց **մշակութային արժեքների «օգտագործումն» է ստիպում դրանց կորցնել լրացուցիչ պաշտպանությունը և վերածվել ռազմական նպատակ հետապնդող թիրախի: Փաստորեն, առաջ գալով որպես սահմանափակող ուժ, ռազմական**

26 Տե՛ս **Burrus M. Carnahan**, Lincoln. Lieber and the laws of war: The origins and limits of the principle of military necessity, "American Journal of International Law", 1998, Vol. 92, էջ 213, **Horace B. Robertson, Jr.**, The principle of military objective in the law of armed conflict, **Michael N. Schmitt** (Ed.), The Law of Military Operations — Liber Amicorum Professor Jack Grunawalt, "International Law Studies", Naval War College Press, Newport, Rhode Island, 1998, Vol. 72, էջ 197:

27 Տե՛ս Convention Respecting the Laws and Customs of War on Land and Its Annex: Regulations Concerning the Laws and Customs of War on Land art. 27, Oct. 18, 1907, art. 23 (g), <https://ihl-databases.icrc.org/ihl/INTRO/195> (մուտք՝ 06.03.2022):

28 Տե՛ս **Henckaerts J.-M.**, նշվ. աշխ., էջ 27-55:

29 Convention Respecting the Laws and Customs of War on Land and Its Annex: Regulations Concerning the Laws and Customs of War on Land art. 27, Oct. 18, 1907.

անհրաժեշտությունն այնուհետև դարձավ թույլատրելի բացառություն³⁰: Հետևաբար 20-րդ դարի ընթացքում հիշյալ դրույթի կոնկրետացմանն ուղղված միջազգային հանրության ջանքերը խիստ հրամայական էին նոր իրողությունների պայմաններում: Որպեսզի ավելի հասկանալի լինի սկզբունքի առանձնահատկությունների մեկնությունը, հարկ է մեջբերել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդունված՝ մշակութային ժառանգությանը վերաբերող որոշումներից մեկի առնչությամբ ասված բրիտանացի դատավորի խոսքերը. «...ռազմական անհրաժեշտության պահանջը ներառում է ռազմական «անհրաժեշտությունը», այլ ոչ թե ռազմական «առավելությունը»³¹: Ինչպես Հաագայի 1907 թ. կանոնակարգերում, այնպես էլ 1954 թ. կոնվենցիայում այս իրավական կետի կիրառումը հիմնականում թողնվեց պատերազմող կողմերի հայեցողությանը: **Սակայն չպետք է մոռանալ, որ 1954 թ. կոնվենցիան կազմվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, մի ժամանակ, երբ դեռ ընդունելի էին համարվում քաղաքների վրա հարձակումները, և, փաստորեն, կոնվենցիան փորձում էր մեղմել մշակութային արժեքների վրա հարձակումները այդպիսի ավերածությունների դեպքում:** 1977 թ. ընդունված՝ Ժնևի 1949 թ. օգոստոսի 12-ի կոնվենցիային կից առաջին արձանագրությունը մշակութային արժեքների պաշտպանությունը մոտեցրեց քաղաքացիական օբյեկտների պաշտպանությանը և նշեց, որ, որպես այդպիսին, դրանք չպետք է հարձակման ենթարկվեն, կրկին բացառությամբ ռազմական անհրաժեշտության դեպքերի³²: Ժնևի հիշյալ արձանագրության 52-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված ռազմական նպատակը պարունակում էր երկու էական չափանիշ, որոնք պետք է լիարժեքորեն կատարվեին մինչ ժառանգության օբյեկտների ոչնչացումը, գրավումը կամ վնասազերծումը³³: Առաջինն այն էր, որ հարձակումները պետք է սահմանափակվեին միայն ռազմական օբյեկտներով: Հարձակման դեպքում էլ օբյեկտի բնույ-

30 Տե՛ս **Johannot-Gradis Ch.**, Protecting the past for the future: How does law protect tangible and intangible cultural heritage in armed conflict?, "International Review of the Red Cross", 2015, N 97 (900), էջ 1253-1275:

31 United Kingdom, Military Court at Hamburg, A. D. Case, 19 December 1949, p. 522, cited in Éric David, Principles du droit des conflits armés, Bruylant, Brussels, 2002, p. 270.

32 Տե՛ս Protocol Additional to the Geneva Conventions of 12 August 1949, and relating to the Protection of Victims of International Armed Conflicts (Protocol I):

33 Տե՛ս **Henckaerts J.-M.**, նշվ. աշխ., էջ 27-55:

թը, գտնվելու վայրը, նպատակը կամ օգտագործումը պետք է լինեն այնպիսին, որ այն «արդյունավետ ներդրում ունենա ռազմական գործողություններում»³⁴: Իսկ երկրորդ չափանիշն այն էր, որ ռազմական առավելությունը պետք է լիներ բացահայտ և որոշակի³⁵: Ուրեմն ռազմական անհրաժեշտությունը երբեք չի կարող վկայակոչվել՝ արդարացնելու մշակութային արժեքների վրա հարձակումը, քանզի, մասնագետների պնդմամբ, միշտ էլ հնարավոր է ժառանգությունը շրջանցելու ուղիներ գտնել:

Փաստական համատեքստից ակներև է, որ մշակութային ժառանգության օգտագործումը ռազմական նպատակով արդեն իսկ խնդրահարույց որոշում կարող է լինել զինված ուժերի կամ պետության կողմից, բայց հասկացության ուսումնասիրությունը պարզեց, որ նույնիսկ այդ դեպքում հարձակումը դեռևս օրինական հիմնավորում չի կարող լինել. **«Չի թույլատրվում ոչնչացնել այնպիսի մշակութային օբյեկտը, որի օգտագործումը որևէ ներդրում չի բերում ռազմական գործողություններում, ոչ էլ այն մշակութային օբյեկտը, որը ժամանակավորապես ծառայել է որպես մարտիկների ապաստարան, բայց այլևս որպես այդպիսին չի օգտագործվում»**³⁶: Այսինքն՝ մշակութային կառույցի՝ միայն տվյալ պահին օգտագործումն է³⁷, որ կարող է այն «վերածել» ռազմական նպատակ հետապնդող թիրախի: Նմանապես, քանի որ մշակութային արժեքների գերակշիռ մասը, իր բնույթով պայմանավորված, չի կարող արդյունավետ ներդրում ունենալ ռազմական գործողություններում, պարզ է դառնում, որ միայն դրա «հետագա նպատակային օգտագործումն» է, որ կարող է այն թիրախ դարձնել թշնամու կողմից: Այլ կերպ ասած՝ ռազմական գործողություններին

34 Նույն տեղում, էջ 34:

35 Տե՛ս Protocol Additional to the Geneva Conventions of 12 August 1949, and relating to the Protection of Victims of International Armed Conflicts (Protocol I), 8 June 1977, <https://ihl-databases.icrc.org/ihl/INTRO/470> (մուտք՝ 09.02.2022):

36 **Bothe M., Partsch K. J., Waldemar A. S.**, New Rules for Victims of Armed Conflicts, Commentary on the Two 1977 Protocols Additional to the Geneva Conventions of 1949, Martinus Nijhoff, The Hague/Boston/London, 1982, p. 334, para. 2.6.

37 Գոյություն ունեն տարբեր եղանակներ, որ հակառակորդը կարող է օգտագործել մշակութային արժեքները ռազմական գործողությունների ընթացքում: Ամենաակնհայտը անշարժ մշակութային ժառանգության մեջ դիրք գրավելն է, օրինակ՝ բլրի զազաթի պատմական ամրոցը որպես պաշտպանական ամրոց օգտագործելը կամ միջնադարյան զանգակատանը կամ մինարթթում դիպուկահարի տեղադրումը՝ մարտադաշտը հետախուզելու նպատակով: Մեկ այլ օրինակ է, եթե ռազմական սարքավորումներ կամ զինամթերք է պահվում թանգարանում, պատկերասրահում կամ պատմական նշանակություն ունեցող տանը:

օժանդակելու համար մշակութային ժառանգության օգտագործումը հիմնական փաստարկն է, որ զինված հակամարտության կողմերից մեկը կարող է վկայակոչել մշակութային արժեքների վրա հարձակումը արդարացնելու համար³⁸:

Համալիր այս հարցադրումները, որոնք մարտահրավերի տեսքով ներկայացան միջազգային հանրությանը, 1999 թվականին «ստիպեցին» ընդունել Հաագայի 1954 թվականի կոնվենցիայի երկրորդ արձանագրությունը: Արձանագրության խնդիրն էր տալ ռազմական հրամայական անհրաժեշտության առավել ամբողջական բացատրությունը. **«Մշակութային արժեքը, որն իր բնույթով, գտնվելու վայրով, նպատակով կամ օգտագործմամբ արդյունավետ ներդրում ունի ռազմական գործողություններում, և որի մասնակի ոչնչացումը, գրավումը կամ վնասագերծումը տվյալ պահին տիրող հանգամանքներում տալիս են արդյունավետ և հստակ ռազմական առավելություն»**³⁹: Սահմանումը «արդյունավետ» և «հստակ» բառերի միջոցով շեշտում է, որ ժառանգության թիրախավորմամբ առաջարկվող ռազմական առավելությունը պետք է լինի որոշակի և արդյունավետ ներդրում ունենա ռազմական գործողություններում, երբ պարզվի, որ իրագործելի այլ այլընտրանք չկա:

Չնայած որոշ հստակեցումներին, այնուամենայնիվ, այս փաստաթղթում մշակութային արժեքների՝ ռազմական նպատակներով օգտագործման և տեղակայման հարցը կրկին մնում է վիճահարույց՝ պայմանավորված որոշ դրույթների մեկնաբանմամբ⁴⁰: Արդեն պարզ է, որ մշակութային արժեքը կարող է դառնալ ռազմական նպատակ հետապնդող թիրախ միայն այն դեպքում, եթե սկսել են այն օգտագործել ռազմական նպատակներով, բայց սահմանման մեջ կա նաև գտնվելու վայրի խնդիրը, որը նույնպես վիճահարույց է: Եթե միայն գտնվելու վայրը կարողանար մշակութային արժեքը վերածել ռազմական նպատակ հետապնդող թիրախի, ապա մշակութային արժեքների պաշտպանությունը մեծապես կթուլանար: Պարզ է, որ մշակութային արժեքի բնույթն ու նպատակը երբեք չեն

38 Տե՛ս Roger O’Keefe, Camille Péron, Tofiq Musayev, Gianluca Ferrari, նշվ. աշխ., էջ 1-91:

39 Second Protocol to the Hague Convention of 1954 for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict The Hague, 26 March 1999, art. 1 f.

40 Տե՛ս Henckaerts J.-M., նշվ. աշխ., էջ 27-55:

կարող այն վերածել ռազմական նպատակ հետապնդող թիրախի. ողջ խնդիրը գտնվելու վայրն է:

2. Ղազանչեցոցի թիրախավորման փաստարկների բացակայությունը

Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու գտնվելու վայրը չէր կարող այն դարձնել ռազմական նպատակ հետապնդող թիրախ, քանզի այն տեղակայված չէր ռազմական օբյեկտների հարևանությամբ, և կառույցն էլ իր բնույթով հոգևոր էր ու որևէ աղերս չէր կարող ունենալ ռազմական նպատակով օգտագործման հետ: **Փաստորեն, թիրախավորման «օրինականացման համար» անհրաժեշտ էր, որ այն հարձակման պահին Արցախի զինված ուժերի կողմից օգտագործվեր ռազմական նպատակներով:** Բայց հայտնի ճշմարտություն է, որ հարձակման պահին եկեղեցուն քաղաքացիական անձինք և լրագրողներ են եղել: Բացի այդ՝ եկեղեցու ոչնչացումը ռազմական տեսանկյունից որոշակի և բացահայտ առավելություն չէր կարող ապահովել թշնամու համար: Ըստ այդմ՝ Ղազանչեցոցը չէր կարող թիրախավորվել միայն իր գտնվելու վայրի պատճառով, և ի վերջո միայն դրա օգտագործումն էր, որ այն կարող էր վերածել ռազմական նպատակ հետապնդող թիրախի, սակայն այդ հիմքը, փաստորեն, ևս գոյություն չուներ:

Վերոշարադրյալ որոշ դիտարկումներ ակներև են դարձնում այն փաստը, որ «ռազմական անհրաժեշտությունը» չի կարող տալ մշակութային ժառանգությունը վնասելու կամ ոչնչացնելու անսահմանափակ ուժ⁴¹: Քանզի երկրորդ արձանագրությունն ընդլայնում է հրամայական ռազմական անհրաժեշտության շրջանակը՝ նախատեսելով, որ մշակութային արժեքների դեմ թշնամանքի գործողությունն օրինական է, եթե բավարարվում է երկու պահանջ. 1. «մշակութային արժեքն իր գործառնությամբ վերածվել է ռազմական նպատակներ հե-

41 Sté Techera E., Protection of Cultural Heritage in Times of Armed Conflict: The International Legal Framework Revisited, 2007, էջ 1, https://www.researchgate.net/publication/228260427_Protection_of_Cultural_Heritage_in_Times_of_Armed_Conflict_The_International_Legal_Framework_Revisited (մուտք՝ 10.05.2022):

տապնդող թիրախի», 2. «համանման ռազմական առավելություն ստանալու համար իրագործելի այլընտրանք չկա»⁴²:

Ղազանչեցոցի թիրախավորման համար «ռազմական նպատակի» շուրջ այս համալիր հարցադրումները փորձեցինք պարզաբանել, որպեսզի չեզոքացնենք հարձակումից հետո Ադրբեջանի նախագահի կողմից, ադրբեջանական մամուլում և այլուր շրջանավոր տեղեկատվությունն առ այն, որ հարձակման պահին եկեղեցում հայ զինվորներ են եղել, և այնտեղ պահվել է զենք-զինամթերք: Ասվածից կբխեր այն, որ իբրև թե հարձակման պահին եկեղեցին **օգտագործվել է որպես ապաստարան** և հակառակորդին սովել հնարավորություն՝ այն թիրախավորելու որպես ռազմական օբյեկտ (քանզի երբ մշակութային արժեքն օգտագործվում է որպես ապաստարան, գրկվում է իր լրացուցիչ պաշտպանությունից և մշակութային հուշարձանից վերածվում «ռազմական օբյեկտի»): Իհարկե, ադրբեջանական պետական օղակները լավ են տիրապետում միջազգային օրենքների շուրջ նման մանևրերին, ուստի առիթը բաց չեն թողնում օրենքն իրենց օգտին շրջելու համար: Այս դեպքում ավելորդ չէ շեշտադրել, որ նույնիսկ եթե եկեղեցին օգտագործվեր ռազմական նպատակով, դա դեռևս չէր տա այն թիրախավորելու իրավունք: Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու վրա ադրբեջանական հարձակումը բոլոր առումներով անօրինական էր, քանզի՝

1. մշակութային ժառանգությունը ռազմական նպատակներին ծառայեցնելը դեռևս չի արդարացնում հակառակորդի կողմից դրա վրա հարձակումը. նման օգտագործմամբ մշակութային ժառանգությունը կարող է դառնալ ռազմական նպատակ հետապնդող թիրախ միայն այն դեպքում, եթե դրա ոչնչացումը արդյունավետ ներդրում ապահովի ռազմական գործողություններում,

2. մշակութային ժառանգությունը ռազմական նպատակ հետապնդող թիրախ կարող է դառնալ միայն այն դեպքում, եթե դրա ամբողջական կամ մասնակի ոչնչացումը, գրավումը

42 The 1999 Second Protocol specifies in its Article 1 (f) that its understanding of the notion of “military objective” coincides with that of Article 52 (2) of the 1977 Additional Protocol I to the 1949 Geneva Conventions.

կամ վնասագերծումը տվյալ պահին տիրող հանգամանքներում ապահովեն ռազմական որոշակի առավելություն,

3. նույնիսկ եթե մշակութային ժառանգության թիրախավորումը հետապնդում է ռազմական նպատակ, դրա վրա հարձակումը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե նման ռազմական առավելություն ստանալու համար իրագործելի այլընտրանք չկա⁴³:

Մի խոսքով՝ մշակութային ժառանգության վրա հարձակումը վերջին միջոցն է, և ռազմական ուժերը պետք է երկար մտածեն ռազմական գործողությունների այլընտրանքային ուղիների իրագործելիության շուրջ նախքան մշակութային արժեքների վրա հարձակում գործելը⁴⁴: Իրականում խնդիրն այն է, որ Շուշիի Սուրբ Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցին հարձակման ենթարկվեց նույնիսկ այն դեպքում, երբ այն չէր օգտագործվում որևէ ռազմական նպատակով, ոչ էլ դրա ոչնչացումը կարող էր արդյունավետ և կոնկրետ ներդրում ապահովել ռազմական գործողություններում ու բեկել պատերազմի ընթացքը: Բացի այդ՝ եկեղեցու վրա հարձակումը այդ պահին տիրող իրավիճակում չէր կարող լինել ռազմական առավելություն ստանալու միակ իրագործելի միջոցը: **Այդ գործողությունն ուներ մեկ նպատակ՝ հարվածել Արցախի և ողջ հայության քրիստոնեական խորհրդանիշին, հարվածել Արցախի ժողովրդի ինքնությանը և հոգեբանական տրավմայի ենթարկել առանց այդ էլ խոցված հասարակությանը:**

3. Պատերազմի ժամանակ մշակութային արժեքի պաշտպանության տարբերակման սկզբունքը

Սովորության դարձած միջազգային մարդասիրական օրենքի երկրորդ սկզբունքը տարբերակումն է: Այն հակամարտության կողմերից պահանջում է մշտապես տարբերակել քաղաքացիական և ռազմական օբյեկտները՝ հարձակվելով միմիայն ռազմական օբյեկտների վրա, ուշադրությունը սևեռելով այն իրողության վրա, որ

43 Տե՛ս Second Protocol To The Hague Convention Of 1954 For The Protection Of Cultural Property In The Event Of Armed Conflict The Hague, 26 March 1999, art. 6 a:

44 Տե՛ս Roger O'Keefe, Camille Péron, Tofiq Musayev, Gianluca Ferrari, նշվ. աշխ., էջ 1-91:

մշակութային կառույցները, ըստ Ժնևի սկզբունքների, քաղաքացիական օբյեկտներ են: Տարբերակման սկզբունքի առավել ճշգրտման համար «Զինված հակամարտության դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թ. կոնվենցիային կից 1999 թ. երկրորդ արձանագրությունը սահմանում է նաև լրացուցիչ պայմաններ. գինված բախումների ընթացքում անհրաժեշտ է կատարել ստուգելու, գնահատելու և նախազգուշական միջոցներ ձեռնարկելու պարտավորությունները, որոնց պահանջները մեծանում են՝ կախված ժառանգության նշանակությունից:

Միջազգային սովորության 8-րդ կանոնում նշվում է, որ տարբերակման սկզբունքը պարտավորություններ է սահմանում ոչ միայն հարձակվող, այլև պաշտպանվող կողմի համար, որոնցով արգելում է պաշտպանվող կողմերին «օգտագործել» մշակութային ժառանգության բաղադրիչները ռազմական նպատակներով, ինչը կարող է հարձակման հետագա նախապայման ու հիմնական դրդապատճառ հանդիսանալ⁴⁵: Այս արգելքը, որը բացակայում էր Հասագայի 1907 թ. կանոնակարգերում, ներառվեց 1954 թ. կոնվենցիայի 4-րդ հոդվածում և ավելի ամրապնդվեց 1999 թ. արձանագրությամբ:

Հարձակման ժամանակ մշակութային ժառանգության արժեքները չվնասելու համար հակամարտության կողմերից պահանջվում է՝ ա) անել հնարավորը՝ ստուգելու համար, որ հարձակման ենթակա օբյեկտը 1954 թ. կոնվենցիայի 4-րդ հոդվածով պաշտպանված մշակութային արժեք չլինի, բ) ձեռնարկել բոլոր նախազգուշական միջոցները հարձակման միջոցների և մեթոդների ընտրության հարցում՝ մշակութային արժեքների պատահական վնասներից խուսափելու կամ դրանք նվազագույնի հասցնելու համար, գ) ձեռնպահ մնալ հարձակումը սկսելու որոշում կայացնելուց, որը ենթադրում է, որ պատահական վնաս կհասցնի մշակութային արժեքներին, դ) չեղյալ հայտարարել կամ կասեցնել հարձակումը, եթե պարզվում է, որ թիրախը մշակութային արժեք է, որի վրա հարձակումը կարող է պատահական վնաս պատճառել դրան, որը չափա-

45 Տե՛ս Practice Relating to Rule 8. Definition of Military Objectives, Related Rule, Section A. General, Among the causes for an object's transformation into a "military objective", Article 52 of AP I expressly refers to the object being "used" in such a way as to "make an effective contribution to military action", https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v2_rul_rule8 (մուտք 10.05.2022):

զանց մեծ կլինի կանխատեսված կոնկրետ և ուղղակի ռազմական առավելության համեմատ⁴⁶:

Իրապես մշակութային ժառանգությունը հարձակումից պաշտպանելը կախված է ստուգման փաստից: Անգամ երբ հարձակումը սկսելու նախնական որոշումը կայացվում է խիստ սահմանափակ ժամկետներում, ոչ լիարժեք տեղեկատվության պայմաններում, և հետագայում պարզվում է, որ հարձակման ենթակա թիրախը մշակութային արժեք է, հարձակվող կողմը պարտավոր է չեղյալ հայտարարել կամ կասեցնել հարձակումը⁴⁷:

4. Պատերազմի ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանության համամասնության սկզբունքը

Երրորդ սկզբունքը՝ **համամասնությունը**, միջազգային սովորության զբաղմունքի հիմնական սկզբունքներից է: Այն ենթադրում է հավասարակշռության որոնում ռազմական ցանկությունների և ֆունդամենտալ արժեքների միջև: Դրա նպատակն է ռազմական անհրաժեշտությունը հաշտեցնել հումանիզմի պահանջների հետ⁴⁸: Այս սկզբունքը օրենսդրության մեջ հստակորեն ամրագրվել է միայն Հասագայի առաջին և երկրորդ արձանագրությունների համապատասխան հոդվածներով⁴⁹: Այս համապատկերում համամասնության սկզբունքը սահմանում է. «Հարձակումը, որը կարող է հանգեցնել պատահական կորուստների, քաղաքացիական անձանց վնասվածքների, քաղաքացիական օբյեկտների վնասման, անհրաժեշտ է դիտարկել համամասնության սկզբունքով. ռազմական առավելությունը, որը պետք է ձեռք բերվի դրանք վերացնելով, համարժեք է արդյոք դրանց կորստին»⁵⁰:

46 Տե՛ս Second Protocol To The Hague Convention Of 1954 For The Protection Of Cultural Property In The Event Of Armed Conflict The Hague, 26 March 1999, art. 7:

47 Տե՛ս Roger O'Keefe, Camille Péron, Tofiq Musayev, Gianluca Ferrari, նշվ. աշխ., էջ 1-91, պարագրաֆ 100-101:

48 Տե՛ս Johannot-Gradis Ch., նշվ. աշխ., էջ 1253-1275:

49 Տե՛ս Protocol to the Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed conflict 1954, The Hague 14 May 1954, art. 57 (2a, b), http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=15391&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html (մուտք 12.02.2022) և Second Protocol To The Hague Convention Of 1954 For The Protection Of Cultural Property In The Event Of Armed Conflict The Hague, 26 March 1999, art. 7c, d:

50 Culture Under Fire: Armed Non-State Actors And Cultural Heritage In Wartime, Geneva Call, UNESCO, October 2018, p. 20.

Որպեսզի պարզվի՝ կանխատեսված ռազմական գործողությունն օրինական է, թե ոչ, հակամարտող կողմը պետք է գնահատի արժեքների հարաբերակցությունը, այսինքն՝ «ուղղակի և կոնկրետ առավելությունը», որը կրխի այդ ժառանգության վրա հարձակումից, և «չափազանց մեծ վնասը», որը կրխի ժառանգության կորստից՝ համեմատած ռազմական առավելության հետ, որը կունենա կողմը՝ մշակութային արժեքը ոչնչացնելով: Այս դեպքում համամասնության սկզբունքը ներառում է և՛ որակական, և՛ քանակական գործոններ, քանի որ «պատահական կորուստը, որը կարող է պայմանավորված լինել ժառանգության վնասմամբ կամ ոչնչացմամբ, պարզապես քառակուսի կամ խորանարդ մետրով գնահատվող վնաս չէ, այլ օբյեկտի, կառույցի կամ տարածքի մշակութային ինքնության, գաղափարական և այլ արժեքների»⁵¹: Եվ քանի որ մշակութային ժառանգության տարրերն անփոխարինելի են, միայն շատ լուրջ և ուղղակի ռազմական առավելության «խոստումը» բավարար կլինի արդարացնելու հարձակումը⁵²: Բացի այդ, եթե այնուամենայնիվ կայացվել է մշակութային ժառանգության վրա հարձակման որոշում, հասցվելիք վնասը նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է, օրինակ, ռմբակոծման փոխարեն ընտրել այլ միջոցներ, ինչը թույլ կտա կառավարելի դարձնել գոնե ընթացքը⁵³:

Իրոք, մշակութային արժեքին պատճառված վնասի ծանրության գնահատումը բարդ է, քանի որ դրա համար անհրաժեշտ են ձգբրիտ գիտելիքներ տվյալ ժառանգության ոչ միայն արտաքին, այլև ներքին արժեքի մասին⁵⁴: Այնուամենայնիվ, մշակութային արժեքի գնահատումը միշտ այդքան հեշտ չէ՝ հաշվի առնելով այն փաստը, որ մարդիկ, որոնք որոշումներ են կայացնում, չունեն թշնամու մշակութային ժառանգության մասին անհրաժեշտ գիտելիքներ:

Այստեղ հիմնավոր հարց է առաջանում՝ արդյոք ռազմատենչ Ադրբեջանի՝ հայկական ինքնության խորհրդանիշը խոցելու ցանկությունն ու նույնքը համարժեք կարո՞ղ էին լինել մի ողջ հանրության ստեղծած ժառանգության այդքան մեծ վնասին. չէ՞ որ եկեղեցին

51 Roger O’Keefe, Camille Péron, Tofiq Musayev, Gianluca Ferrari, op. cit., p. 89.

52 Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 120:

53 Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 123:

54 Տե՛ս Johannot-Gradis Ch., նշվ. աշխ., էջ 1253-1275:

յուրաքանչյուր վնասից կորցնում է իր իսկությունն ու ամբողջականությունը, և խաթարվում է նրա պատմականության ճշգրիտ պահպանման իրական ֆենոմենը:

5. Պատերազմի ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանության նախագգուշության սկզբունքը

Նախագգուշության սկզբունքը միջազգային սովորությանին օրենքի վերջին սկզբունքն է, որն ամրապնդում է տարբերակման և համաչափության սկզբունքների համապատասխանությունը՝ հստակեցնելով դրանց գործադրման ասպեկտները. դրանք նպատակ ունեն սահմանափակելու և նվազագույնի հասցնելու ռազմական գործողությունների պատճառած վնասը: Այս սկզբունքն ի սկզբանե մարմնավորվել է «Զինված հակամարտության դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954 թ. կոնվենցիային կից՝ նույն տարում ընդունված առաջին արձանագրությամբ⁵⁵ և իրավական զարգացում ապրել 1999 թ. արձանագրության մեջ⁵⁶: Դրանք ստիպում են ռազմատենչներին հատուկ ուշադրություն դարձնել պատերազմի միջոցների և մեթոդների ընտրության, ինչպես նաև ավագ սպաների կողմից որոշումների կայացման անհրաժեշտության վրա, իսկ մշակութային ժառանգությունը թիրախավորելու դեպքում՝ կիրառել նվազագույնը նախագգուշացումը: Նախագգուշության սկզբունքի հիմքը կրկին Հաագայի երկրորդ արձանագրությունն է, որը մշակութային արժեքի վրա հարձակման առնչությամբ ավելացրեց նաև մի քանի այլ կետեր, որոնք էլ ավելի են մեծացնում մշակութային ժառանգության պաշտպանությունը հարձակման ժամանակ: Մշակութային ժառանգության վրա «հրամայական ռազմական անհրաժեշտությամբ» հարձակման կամ դրա օգտագործման մասին որոշումը պետք է ընդունվի միայն սպայի կողմից, որը ղեկավարում է գումարտակին համարժեք կամ ավելի մեծ ուժ, եթե

55 Տե՛ս նույն տեղում:

56 Տե՛ս Protocol to the Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed conflict 1954, The Hague 14 May և Second Protocol To The Hague Convention Of 1954 For The Protection Of Cultural Property In The Event Of Armed Conflict The Hague, 26 March 1999, art. 7:

հանգամանքները այլ բան թույլ չեն տալիս⁵⁷, և հարձակումից առաջ պետք է նախազգուշացում տրվի, եթե դա թույլ են տալիս հանգամանքները⁵⁸: Կանոնի տրամաբանությունն այն է, որ որքան բարձր է որոշումների կայացման մակարդակը, այնքան մեծ է ոչ միայն համապատասխան տեղեկատվության հասանելիությունը, այլև որոշում կայացնողի փորձը: 1954 թ. կոնվենցիայով այդ պարտավորությունը չի եղել: Ի դեպ, նախազգուշացում տալու պարտավորությունը գործում է նաև խաղաղ բնակչության վրա հարձակվելիս⁵⁹: Սա ցույց է տալիս, թե ինչպես է մշակութային արժեքների պաշտպանությունը որոշ առումներով մոտենում քաղաքացիական բնակչության պաշտպանությանը և անցնում քաղաքացիական այլ օբյեկտների պաշտպանության սահմաններից:

Փաստորեն, Հաագայի 1999 թ. երկրորդ արձանագրությունը փորձում է խստացնել պայմանները և ավելացնում է, որ հարձակումը պետք է պատվիրվի հրամանատարության ամենաբարձր օպերատիվ մակարդակում, և անորոշ ձևակերպումը՝ «երբ հանգամանքները թույլ են տալիս», զգալիորեն նեղացվում է, ու ավելացվում «անհապաղ ինքնապաշտպանության պահանջների պատճառով»⁶⁰: Բացի այդ՝ իրավիճակը շտկելու համար հակառակորդ ուժերին պետք է ողջամիտ ժամանակ տրամադրվի, ինչն ավելացնում է պաշտպանության լրացուցիչ շերտ⁶¹: Կանոնների տրամաբանությունն այստեղ երկակի է: Նախ՝ երբ մշակութային արժեքն իսկապես օգտագործվում է ռազմական գործողություններին օժանդակելու համար, նախնական նախազգուշացումը հակառակորդին հնարավորություն է տալիս դադարեցնելու այդպիսի օգտագործումը: **Երկրորդ**՝ նախնական նախազգուշացումը հակառակորդին հնարավորություն է տալիս գործնական միջոցներ ձեռնարկելու մշակութային օբյեկտի կամ դրանում տեղակայված ցանկացած շարժական

57 Տե՛ս Second Protocol to the Hague Convention of 1954 for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict The Hague, 26 March 1999, art. 6 c:

58 Տե՛ս նույն տեղում, art. 6 d:

59 Տե՛ս Protocol to the Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed conflict 1954, The Hague 14 May 1954, art. 57 (2) (c):

60 Second Protocol to the Hague Convention of 1954 for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict The Hague, 26 March 1999, art. 13 (2) (c).

61 Տե՛ս Henckaerts J.-M., նշվ. աշխ.:

արժեքի վնասը նվազագույնի հասցնելու կամ այն անվտանգ վայր տեղափոխելու համար⁶²:

Զինված ուժերի մարտական գործողությունների համապատասխանությունը վերը նկարագրված չորս սկզբունքներին էական պատճեն է ժառանգության վնասների դեմ⁶³:

Եզրակացություններ

Պատերազմի ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության 4 սովորության սկզբունքների քննությունը մեզ հնարավորություն տվեց անելու մի շարք կարևոր եզրահանգումներ առ այն, որ Ադրբեջանի զինված ուժերը պարտավոր էին հաշվի առնել, որ հարձակման ենթակա օբյեկտը չլիներ մշակութային արժեք՝ պարզելու դեպքում զերծ մնալով հարձակումից: Ադրբեջանը պարտավոր է հարգել ցանկացած մշակութային արժեք՝ անկախ դրա ծագումից և նշանակությունից, քանզի, համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի սկզբունքների, յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգությունն իր ներդրումն ունի համաշխարհային մշակութային բազմազանության մեջ: Բացի այդ՝ ադրբեջանական զինված ուժերը պարտավոր էին նախազգուշական միջոցներ ձեռնարկել նախքան Ղազանչեցոցի վրա հարձակում սկսելը, ինչը հնարավորություն կտար դուրս բերելու մշակութային ժառանգության արժեքավոր շարժական իրերն ու անվտանգ վայր տեղափոխելու մարդկանց: Նրանք պարտավոր էին գնահատել նույնիսկ հնարավոր պատահական վնասը, որը չափազանց մեծ կարող էր լինել ռազմական ակնկալվող առավելության հետ համեմատած: Պարզ է, որ Ադրբեջանի կողմից չէին տրվել նախազգուշացում և ողջամիտ ժամանակ, ինչը նա պարտավոր էր անել ըստ միջազգային սովորության օրենքների կամ էլ իբրև ազգային պետության՝ իր ընդունած Հաագայի 1999 թ. երկրորդ արձանագրության և Ժնևի կոնվենցիաների սկզբունքների:

Ադրբեջանական զինված ուժերի կողմից եկեղեցու գմբեթին երկու անգամ հասցված ձշգրիտ հարվածները ապացուցեցին, որ այն

62 Տե՛ս Roger O'Keefe, Camille Péron, Tofiq Musayev, Gianluca Ferrari, նշվ. աշխ., պարագրաֆ 102-105:

63 Տե՛ս Johannot-Gradis Ch., նշվ. աշխ., էջ 1253-1275:

դիտավորյալ և նպատակային հարձակում էր: Վստահաբար կարող ենք պնդել, որ, **համաձայն Հաագայի 1954 թ. «Զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» կոնվենցիայի երկրորդ արձանագրության, նման հարձակումը որակվում է որպես ռազմական հանցագործություն, ինչի համար թե՛ հրաման արձակողը, թե՛ կատարողները, ինչպես նաև հարձակումը չկանխողները ենթակա են քրեական պատասխանատվության և կարող են դատապարտվել թե՛ միջազգային և թե՛ ազգային մակարդակներում:** Բացի այդ, ըստ պատերազմի օրենքների, պետք է գործեին նաև տարբերակման և համաչափության սկզբունքները, որոնք ևս խախտվեցին: Այս առումով եկեղեցու հրթիռակոծումը չէր կարող լինել հրամայական ռազմական անհրաժեշտություն և այդ պահի դրությամբ միակ իրագործելի միջոցը, ավելին՝ տալ Ադրբեջանին այնպիսի ռազմական առավելություն, որը համամասնորեն կարող էր չեզոքացնել հարձակման հանցավորությունը: Կարող ենք վստահաբար ասել, որ եկեղեցու ավերումը բնականաբար չէր կարող Ադրբեջանին տալ ոչ մի ռազմական օգուտ, սակայն կարևոր է մշակութային ենթատեքստը. այն հարված էր հայ ինքնությանը, քանզի մշակութային կառույցին հասցված վնասը չի կարող գնահատվել միայն նյութական վնասի առումով, այլ կարևոր է ներքին՝ գաղափարական արժեքը: Այս քայլով Ադրբեջանը ցույց տվեց իր անհանդուրժողականությունն արցախահայերի՝ ֆունդամենտալ նշանակության մշակութային արժեքների նկատմամբ, իսկ նման քայլը տանում է **մշակութային ցեղասպանության:**

Արմինե Հ. Տիգրանյան – զբաղվում է մշակութային ժառանգության պահպանության, կառավարման և հանրահռչակման խնդիրներով: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են պատերազմի ժամանակ ժառանգության պահպանության մշակութային իրավունքի սկզբունքները, նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության պետական և ոչ պետական մեխանիզմները, ժառանգության քաղաքացիական և համայնքային պահպանության, ինքնության և մշակութային ժառանգության հարցերը:

Էլ. հասցե՝ armine.tigranyan.92@mail.ru

**ANALYSIS OF THE CASE OF ATTACK ON HOLY SAVIOR
CATHEDRAL OF GHAZANCHETSOTS IN SHUSHI**

From the point of view of international principles of protection of
cultural property during war

Armine H. Tigranyan

Keywords – cultural property during war, customary international norms, military necessity, principle of differentiation, principle of proportionality, principles of prevention, Azerbaijani aggression, shelling of Ghazanchetsots Church.

Since the start of the war on September 27, 2020, the Azerbaijani armed forces have openly targeted the Armenian cultural heritage of Artsakh, violating not only its international obligations, imposed by various conventions, but also the generally accepted **customary international norms** for the protection of cultural heritage.

In this article, on the example of the shelling of the St. Ghazanchetsots Church in Shushi by Azerbaijan, an analysis of the principles of protecting cultural heritage during the war, **military necessity, differentiation, prevention and proportionality** is presented.

The international protection of cultural heritage from the dangers of war refers not only to the protection of territories occupied after armed conflict or in peacetime, but also to not harming **during the hostilities themselves**. The problem is that despite the fact that cultural monuments are considered inviolable in time of war and their destruction by the enemy is not permissible, international law provides some counterarguments, therefore, as there are “permissible” rules that “legitimize” attacks on heritage during war.

Azerbaijan, referring to these norms, is trying to “justify” the attack on the Ghazanchetsots Church on October 8, 2020, even shifting the blame to the Armenian side.

The analysis of the four principles for the protection of cultural property in the event of armed conflict, considered in this article, led to the conclusion that the armed forces of Azerbaijan were obliged to ensure that the object to be attacked was not a cultural property, and would refrain from attacking the Ghazanchetsots Church and others values. Moreover, the principle has also become customary,

according to which cultural heritage is the property of humankind, and regardless the fact of its origin, and religious and cultural significance, it must be protected. The Azerbaijani armed forces were required to take precautionary measures when attacking Ghazanchetsots, which would allow to remove the valuable objects of movable heritage, as well as to relocate people to a safe place.

It is obvious that Azerbaijan did not give advance warnings and required time before the start of the attack, which it was obliged to do in accordance with customary international law or in accordance with the principles of The Second Hague Protocol of 1907 and the Geneva Convention, which it accepted as a nation state. Azerbaijan was obliged to assess in advance even the possible accidental damage to valuables, the loss of which could be much significant compared to the expected military advantage.

In addition, according to the laws of wartime, the principles of differentiation and proportionality were to be applied, which were also violated. In this sense, the shelling of the church could not have been an urgent military necessity and the only way to be carried out at that time. And besides, it could not provide Azerbaijan with such a military advantage that could adequately neutralize the criminal attack.

We can say with confidence that the destruction of the church, of course, could not give Azerbaijan any military benefit. Instead, its cultural overtones were taken into account here, which was a blow to the Armenian identity since the damage to the cultural structure cannot be assessed only in terms of material damage – internal ideological value is also important. With this step, Azerbaijan manifested intolerance towards the inalienable right to cultural rights, and that step was aimed at cultural alienation.

Two accurate blows inflicted by the armed forces of Azerbaijan on the dome of the church proved that this was a targeted attack. We can say with confidence that **according to the Second Protocol to The Hague Convention of 1907, the attack is regarded as a war crime, where both the initiator and the perpetrator, as well as those who did not prevent it, are subject to criminal prosecution and can be condemned both at the international and national levels.**

The Azerbaijani side still continues to deny the reality, even after the case of shelling of the Ghazanchetsots Church was recognized as an illegal attack motivated by intolerance and racial hatred and has already been condemned by the International Court of Justice in The Hague on December 7, 2021. Decisions adopted in Strasbourg, No. 2391 “On the humanitarian consequences of the Nagorno-Karabakh conflict” of PACE of September 27 and No. 2582 “On the destruction of the objects of cultural heritage in Nagorno-Karabakh” of March 10,

2006, also characterized this attack as a part of an ongoing state policy based on deliberate illegal ethnic cleansing.

Резюме

АНАЛИЗ СЛУЧАЯ НАПАДЕНИЯ НА ЦЕРКОВЬ СВЯТОГО ХРИСТА ВСЕСПАСИТЕЛЯ КАЗАНЧЕЦОЦ В ШУШИ

С точки зрения международных принципов защиты культурных ценностей во время войны

Армине Г. Тигранян

Ключевые слова - культурные ценности во время войны, обычные нормы международного права, военная необходимость, принцип дифференциации, принцип соразмерности, принцип предупреждения, азербайджанская агрессия, обстрел церкви Казанчецоц.

С началом войны 27-го сентября 2020-го г. вооруженные силы Азербайджана открыто начали наносить удары по объектам армянского культурного наследия в Арцахе, нарушая не только свои международные обязательства, возложенные на них разными конвенциями, но и общепринятые обычные нормы международного права о защите культурного наследия. В данной статье на примере обстрела церкви Сурб Казанчецоц в Шуши со стороны Азербайджана нами представлен анализ принципов защиты культурного наследия во время войны, военной необходимости, дифференциации, предупреждения и соразмерности.

Международная защита культурного наследия от разрушений во время военных действий относится не только к защите памятников на территориях, оккупированных после вооружённого конфликта, но и непричинению вреда **во время самих боевых действий**. Проблема заключается в следующем: несмотря на то, что во время войны культурные памятники считаются неприкосновенными, и их уничтожение – недопустимым, международное право приводит некоторые контраргументы, констатирующие, что существуют «допустимые» нормы, «узаконивающие» посягательства на культурное наследие во время войны. Азербайджан, ссылаясь на эти нормы, пытается «оправдать» атаку на церковь Казанчецоц 8-го октября 2020 г. и даже перекладывает вину на армянскую сторону.

Проведенный в данной статье анализ четырёх принципов защиты культурных ценностей в период военных действий позволил сделать вывод, что вооружённые силы Азербайджана обязаны были выяснить, что объект, подлежащий атаке, не являлся культурной ценностью, и воздержаться от нападения на церковь Казанчеоц и другие культурные ценности Арцаха.

Помимо этого, обычным также стал принцип, согласно которому культурное наследие является достоянием всего человечества, и независимо от факта его происхождения, независимо от религиозной и культурной значимости оно должно быть защищено. Вооружённые силы Азербайджана были обязаны предупредить о нападении на церковь Казанчеоц, что позволило бы вывезти из нее ценные объекты движимого наследия, а также перевезти людей в безопасное место.

Понятно, что со стороны Азербайджана не было предупреждений и не было дано достаточного времени для обеспечения защиты объекта культурного наследия перед началом атаки. Это они обязаны были сделать в соответствии с обычным международным правом или согласно принципам Второго Гаагского протокола 1999 г. и Женевской конвенции, которые страна приняла как суверенное государство. Азербайджан был обязан заранее оценить даже возможное случайное нанесение вреда культурным ценностям, потеря которых могла быть слишком велика по сравнению с ожидаемым военным преимуществом.

Кроме того, согласно законам военного времени, должны были применяться принципы дифференциации и пропорциональности, которые также были нарушены. В этом смысле обстрел церкви не мог быть военной необходимостью и единственным на тот момент способом ведения боевых действий. И кроме того, обстрел церкви не мог предоставить Азербайджану такое военное преимущество, которое могло бы соразмерно нейтрализовать преступное нападение.

Можем с уверенностью сказать, что разрушение церкви, безусловно, не могло дать Азербайджану никакой военной выгоды: здесь учитывался ее культурный подтекст. Оно стало ударом по армянской идентичности, т.к. нанесенный культурной структуре вред нельзя оценить только с точки зрения материального ущерба – важна также и идеологическая ценность. Этим шагом Азербайджан проявил нетерпимость к неотъемлемому праву армянского народа на культурные права, и этот шаг был явно направлен на культурное отчуждение.

Два точных удара, нанесенные вооруженными силами Азербайджана по куполу храма, доказали, что это была целенаправленная атака. **Согласно Второму протоколу Гаагской конвенции 1954 г., такое нападение расце-**

нивается как военное преступление, где и инициатор, и исполнитель, а также те, кто не предотвратил его, подлежат уголовному преследованию и могут быть осуждены как на международном, так и на национальном уровнях. Азербайджанская сторона все еще продолжает отрицать действительность, даже после того, как обстрел церкви Казанчецоц был признан незаконным нападением на почве нетерпимости и расовой ненависти и уже осужден Международным судом ООН в Гааге 7-го декабря 2021 г.

Постановления ПАСЕ, принятые в Страсбурге от 27-го сентября 2021 г., № 2391 «О гуманитарных последствиях нагорно-карабахского конфликта» и от 10 марта 2022 года № 2582 «Об уничтожении объектов культурного наследия в Нагорном Карабахе» также характеризуют данную атаку как часть продолжающейся государственной политики преднамеренной этнической чистки армян.